## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

**Ապրիլի 2-ին, կիրակի.—Զատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Ալեհեր Մասիսի թիկունքից արևի գարնանային ճառագայթները ողողում են Արարատյան դաշտը: Օրը պայծառ է, խաղաղ և ամենուրեք տիրում է գարնանային աշխուժություն:

Հավատացյալների խուռներամ բազմությունը դեռ վաղ առավոտվանից շտապել էր ներկա լինելու առավոտյան ժամերգությանը:

Ժամը 11-ին Մայր տաճարի զանգերի ուրախ ղողանջն ազդարարում է ս. պատարագի սկսվելը:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով, զգեստավորված, Մայր Աթոռի միաբանության ուղեկցությամբ, առաջնորդվում է Մայր տաճար՝ զատկական սուրբ պատարագ մատուցելու:

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգչախումբը:

«Հայր մեր»-ից առաջ, օրվա սուրբ խորհըրդի համապատասխան, Վեհափառ Հայրապետը խոսում է գեղեցիկ մի քարոզ, որը նույն երեկոյան, ժամը 11.30-ին, ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հայրապետական սույն քարոզը տպագրըվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3):

Սուրբ պատարագին ներկա են լինում բազմաթիվ սփյուռքահայ ուխտավորներ տարբեր գաղթօջախներից:

Ս. պատարագին ներկա են լինում նաև Մոսկվայում Բելգիայի դեսպան պրն. Ժակ Դեշան՝ իր հարգելի տիկնոջ հետ, և Մոսկվայում Իտալիայի դեսպանատան զինվորական կցորդ պրն. Ումբերտո Կապուցցոն՝ իր հարգելի տիկնոջ հետ:

Հավարտ ս. Պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարանի գահասրահ:

Հանուն Մայր Աթոռի միաբանության և ներկա գտնվող ողջ հավատացյալների, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Զատիկը, ցանկանում Նրան քաջառողջություն, արևշատություն՝ ի փառս հայ եկեղեցու պայծառության:

Ապա օրհնության խոսք է առնում Ն. Ս. Օծությունը, շնորհավորում համայն հայության ս. Զատիկը, օրհնում մեր ազգն ու եկեղեցին, հայրենիքում և ի սփյուռս աշխար-

նի, ցանկանում նրան խաղաղ, բարգավաճ ու երջանիկ օրեր:

Բոլոր ներկաները հերթով համբուրում են Վեհափառի ս. Աջը և շնորհավորում Նրա Զատիկը:

Վերջում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը բազմաթիվ սփյուռքահայ ուխտավորների, հետաքրքրվում նրանց ազգային-եկեղեցական գաղթօջախների կյանքով և տալիս Իր հայրական օրհնությունը:

Վեհարանում Հայոց Հայրապետը ընդունում է նաև զատկական ջերմ շնորհավորանքներ ս. Զատկի տոնի առիթով մասնավորաբար ս. Էջմիածին ժամանած հարգարժան Ժակ Դեշայի ու իր տիկնոջ և Ումբերտո Կապուցցոյի ու իր տիկնոջ:

Հայոց Հայրապետի և հարգարժան հյուրերի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ օրվա հանդիսությունների հոգեպարար արարողությունների վերաբերյալ, որոնք խորապես տպավորել էին հարգելի հյուրերին:

Բելգիայի դեսպանը մասնավոր ջերմությամբ նշում է Հայոց Հայրապետի այցելությունը Հռոմ 1970 թվականի մայիսի 8—12 օրերին և շեշտում երկու պատմական եկեղեցիների հոգևոր պետերի հանդիպման էկումենիկ նշանակությունը:

Այս առիթով Հայոց Հայրապետը հարգարժան հյուրերին նվիրում է «Հայկական եկեղեցիներ» ալբոմ՝ ի հիշատակ նրանց այցելության Մայր Աթոռ ս. Էջմիածին:

